ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք, ՀՀ
Արմավիրի մարզ, գ.Դաշտ, Մաշտոցի 34, Հեռ. (094) 404402 ,
dasht.armavir@mta.gov.am

N 84
16 հոկտեմբեր 2017թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Դաշտ համայնքի 10.10.2017թվականին կայացած ավագանու թիվ 07հերթական նիստում ընդունած որոշումները:

Կից էլ.նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատ. Առաջատար մասնագետ-համակարգչային օպերատոր՝ Թ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՆՔԻ 10.10.2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ07 ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Օրակարգի հաստատում:
2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի ավագանուն՝Դաշտ համայնքի 2017թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:
3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքում 2018թվականի համար տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
4.<<Հայաստան>> համահայկական հիմնադրամին դրամական դրամական նվիրաբերություն կատարելու մասին:
5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի գիշերային լուսավորության ցանցը վերանորոգելու և վառված լամպերը նորով փոխարինելու մասին:
6.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի համայնքապետարանի համար կենցաղային նյութերի ձեռքբերման մասին:
7.Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի բնակիչներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 32

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ կետով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Ի գիտություն ընդունել Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ղեկավարի հաղորդումը՝համայնքի 2017թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2.Առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկել միջոցներ իր լիազորությունների շրջանակում բյուջեի կատարումն ապահովելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ32 ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

	Եկամուտներ	*Տարեկան պլան հազ.դր.*	*3-րդ եռամսյակ/ հազ.դրամ/*	*Փաստացի հազ.դր.*	*Կատարող ական%*
1	Հողի հարկ	2913.3	1850..0	534.1	28.8
2	Գույքահարկ	1934..0	1450.4	614.9	42.8
3	Տեղական տուրք	242..0	181.5	81.6	44.9
4	Վարձակալական հ/հ	200.6	150..0	138.9	92.6
5	Տեղական վճար	10..0	7.5	0	0
6	***Ընդ.սեփական եկամուտ***	***5299.9***	***3639.4***	***1369.5***	***37.6***
7	Պետ.բյուջեից դոտացիա	17165.4	12874..0	12874.1	100
	Ընդ.վարչ.բյուջեի եկամուտներ	22465.3	16513.4	14243.6	86.2
	Տարեսկզբի ազատ մնացորդ	385.7	385.7	385.7	
	Ընդամենը եկամուտներ	**22851..0**	**16899.1**	**14629.3**	**86.5**

	Ծախսեր	*Տարեկան պլան հազ.դր.*	*3-րդ եռամսյակ/ հազ.դրամ/*	*Փաստացի հազ.դր.*	*Կատարող ական%*
1	Աշխատավարձ գ/ի աշխատողների	12946.4	9200..0	8711.4	94.7
2	Աշխատավարձ մշակույթի տան աշխ.	3848..0	3011.6	2608.5	86.6
3	Էլեկտրաէներգիա	550..0	500..0	427.2	85.4
4	Կապի ծառայություն	174..0	138..0	138..0	100
5	Տեղեկատվական ծառայություն	138.8	138.8	138.8	100
6	Համակարգչային ծառայություն	120..0	100..0	62.6	62.6
7	Մեք. և սարքավ. նորոգում	80..0	80..0	14..0	17.5
8	Աղբահանություն	780..0	585..0	585..0	100
9	Երիտասարդական ծրագրեր	1500..0	1100..0	1014..0	92.2
10	Ներքին գործուղումներ	120..0	100..0	0	0
11	Ներկայացուցչական ծախսեր	220..0	180..0	60..0	33.3
12	Շենք շինութ.ընթ.նոր.	250..0	200..0	0	0
13	Գրասենյակային նյութեր	120..0	80..0	25.9	32.3
14	Կենցաղային նյութեր	100..0	100..0	0	0
15	Դրամաշնորհներ	200..0	200..0		
16	Այլ նպաստներ բյուջեից	1000..0	750..0	450..0	60
17	Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	50..0	50..0	0	0
18	Պահուստային ֆոնդ	268.1	0	0	0
	Ընդամենը վարչակ.բյուջեի ծախսեր	**22465.3**	***16513.4***	***14235.4***	***86.2***
	Ֆոնդային բյուջեի ծախսեր	385.7	385.7	380..0	98.5
1	Վարչական սարքեր	385.7	385.7	380..0	98.5
	Ընդամենը ծախսեր	**22850..0**	**16899.1**	**14615.4**	**86.5**

Աշխատակազմի քարտուղար՝ ---------- Հ.Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդհոդվածներով,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ. ենթակետով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքի 2018թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թվականի հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N33-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների հիմնական օբյեկտների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ:

2.Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500/մեկ հազար հինգ հարյուր / դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000/երեք հազար/ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 /երեք հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված և սեղմված գազի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 25.000 /քսան հինգ հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 35 000 /երեսունհինգ հազար / դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար /դրամ:

12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 /մեկ հազար/ դրամ:

13. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ:

15.Աղբահանության վճար սահմանել համայնքում հաշվառված և փաստացի բնակվող,ինչպես նաև չհաշվառված,սակայն համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր անձի համար ամսեկան 100դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ ---------- Հ.Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34

<<ՀԱՅԱՍՏԱՆ>>ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Արմավիրի մարզի Դաշտ համայնքի բյուջեից <<Հայաստան>> համահայկական հիմնադրամին կատարել նվիրատվություն 25 000/քսան հինգ հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՎ ՎԱՌՎԱԾ ԼԱՄՊԵՐԸ ՆՈՐՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արմավիրի մարզի Դաշտ համայնքի գիշերային լուսավորության ցանցը վերանորոգելու և վառված լամպերը նորով փոխարինելու համար2017թվականի բյուջեով նախատեսված 250 000/երկու հարյուր հիսուն հազար/դրամ գումարը հատկացնել այդ աշխատանքները կատարելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Արմավիրի մարզի Դաշտ համայնքի համայնքապետարանի համար կենցաղային նյութերի ձեռք բերման համար 2017թվականի բյուջեով նախատեսված գումարից՝ հատկացնել 100 000 /մեկ հարյուր հազար/ՀՀ դրամ գումար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 22.08.2017թվականի թիվ 01/07.1/3451-17պաշտոնական գրությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Արմավիրի մարզի Դաշտ համայնքի բնակիչներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ ուսումնասիրելու համար սոցիալական ծանր կացության մեջ գտնվող ընտանիքների վիճակը և համապատասխան եզրակացությունը ներկայացնելու ավագանուն:
2.Հանձնաժողովի կազմում ընդգրկել հետևյալ անձանց՝
1)Արշակ Գրիգորյան /ավագանու անդամ/,
2)Սոնա Հովհաննիսյան /աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ/,
3)Գայանե Մեսրոպյան /համայնքի բնակիչ/:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**